ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 22. Կատարողական վարույթի փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) եղանակները

1. Կատարողական վարույթի փաստաթղթերը դրանց հասցեատերերին ուղարկվում (տրամադրվում) են հետևյալ եղանակներով, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ եղանակը կիրառվում է նախորդ եղանակի կիրառման անհնարինության դեպքում.

1) անձնական գրասենյակ հարթակով.

2) Ծառայության և տվյալ հասցեատիրոջ միջև գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով.

3) էլեկտրոնային փոստով.

4) փոստային առաքմամբ.

5) հրապարակային ծանուցմամբ:

6) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Կատարողական վարույթում փաստաբան ներկայացուցիչ չունեցող և անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ չունեցող ֆիզիկական անձին կատարողական վարույթի փաստաթղթերն ուղարկվում են սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված եղանակներով, միայն եթե այդ մասին միջնորդել է տվյալ անձը, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում:

3. Կատարողական վարույթի փաստաթղթերը կարող են տրամադրվել առձեռն, եթե հասցեատերն այդ նպատակով ներկայացել է հարկադիր կատարողին, կամ եթե կատարողական գործողություններ են իրականացվում տվյալ հասցեատիրոջ ներկայությամբ:

4. Կատարողական վարույթի մասնակիցների միջև կնքված պայմանագրից բխող պարտավորությունների հարկադիր կատարման վարույթում հարկադիր կատարողը պայմանագիրը կնքած բոլոր մասնակիցների նկատմամբ նրանցից որևէ մեկի միջնորդությամբ կարող է կիրառել պայմանագրով նախատեսված ծանուցման կարգը, եթե այդ պայմանագրով ուղղակիորեն նախատեսված է նման

հնարավորություն: Սույն դրույթը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ նման հնարավորություն նախատեսված է իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ արժեթղթեր թողարկողի ազդագրով:

5. Հարկադիր կատարողն անձին չի տրամադրում կատարողական վարույթի փաստաթղթերը, եթե կատարման ենթակա ակտն օրենքով սահմանված դեպքերում կայացվել է առանց այդ անձին լսելու, և քանի դեռ նրան ծանուցելը կարող է խոչընդոտել, անհնարին դարձնել հարկադիր կատարումը կամ էական վնաս հասցնել կատարողական վարույթի այլ մասնակիցներին:

Հոդված 25. Պատշաճ ծանուցումը

1. Կատարողական վարույթի փաստաթղթերը համարվում են պատշաճ կարգով հանձնված, եթե դրանք ուղարկվել, տրամադրվել, տեղադրվել կամ հանձնվել են սույն գլխով սահմանված կարգով, իսկ դրանց հասցեատերերը համարվում են պատշաճ ծանուցված՝

1) փաստաթուղթն էլեկտրոնային հաղորդակցության համապատասխան համակարգում կամ հարթակում տեղադրվելու կամ այդ համակարգի միջոցով հասցեատիրոջ համար դրա հասանելիությունն ապահովելու հաջորդ օրը.

2) եթե էլեկտրոնային հաղորդակցությունը ենթադրում է միայն էլեկտրոնային փոստով ծանուցում, ապա հաղորդագրությունն ուղարկվելու հաջորդ օրը՝ պայմանով, որ առկա է այն ստանալու մասին հասցեատիրոջ կամքից անկախ ձևավորվող էլեկտրոնային հավաստում՝ անկախ հաղորդագրությունը հասցեատիրոջ կողմից փաստացի կարդալուց.

3) փաստաթուղթն առձեռն հանձնվելու օրը.

4) փոստային առաքանին հասցեատիրոջ կողմից ստանալու կամ այն ստանալուց հրաժարվելու օրը.

5) փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուն հաջորդող հինգերորդ օրը:

6) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

2. Կատարողական վարույթի մասնակիցները պարտավոր են հարկադիր կատարողին անհապաղ հայտնել կատարողական վարույթի հարուցումից հետո իրենց հասցեի, ներառյալ էլեկտրոնային փոստի հասցեի կամ հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում փաստաթուղթը հասցեատիրոջ վերջին հայտնի հասցեով ուղարկվելու ուժով համարվում է պատշաճ հանձնված: